Ո՛վ աստուածապահ քաղաքդ մեծ Կամենից՝
Ի քառից կողմանց պատեալ յորդահոս վըտակից,
Անառիկ ամրոց չինեալ ի վերայ վիմի.
Օրհնութիւն աստուածային ի քեզ ծաւալի.
Ազգ հայկազեան զարմի՝ որ ի քեզ բնակի՝
Հաստատեալ յուսով սիրով Ս. Լուսաւորչի,
Պահեսցէ Տէր հաստատուն և անշարժելի,
Պայծառ լուսաւոր դիմաք և անդրդուելի.
Արդոյապատիւ պերճմամբ բարգաւաճելի.
Շքեղազարդութեամբ փայլեալ որ կան ի մարմնի։
Տիրամայր ամենասուրբ Աստուածածին,
Բարեխօսեա Միածնի վասն այս քաղաքի,
Մանաւանդ փոքրիկ հօտի Հայկական զարմի,
Որ կան հաստատեալ սիրով փրկչին Յիսուսի։
[Յաւելագիրք ի Ս. Ղազար]։

1631.

Եղեւ զրաւ սուրբ գանձարանիս ի թվաբերութեան Հայոց ՌՁ և հոկտ. 15, ձեռամբ մեղսաներկ և անհմուտ գրչի Գրիգոր քահանայի որդոյ Անդրէասին։... Բայց գրեցաւ ի յաշխարհ Լեհաց, ի քաղաքն Կամենից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկողայոսի Աքանչելագործի, ի հայրապետութեան Հայոց Տեառն Տէր Մովսէսին, և թագաւորութեան Գ. Զիկմունդին։... Յիշեսջիք և զծնողսն իմ զԱնդրէաս հանդերձ մայրըն իմով Յանայիւ, և ծնողքն իւրեանց։ [Մաշտոց ի գրատան Վիեննայ]։

1631.

Գրեցաւ Երգս Ս. մարգարէին Դաւթի ի լաւ և յընտիր օրինակէ՝ որ կոչի Գառնեցի, ի Ղազար գրչէ, ի խնդրոյ բարեպաշտ և աստուածասէր երկիւղած յԱստուծոյ և ամօթխած ի մարդկանէ մահդասի..... Արդ աղաչեմ զամենեսեան. յիշեսջիք.. զեղկելիս և զյետնեալս ամենեցուն զՂազար գրիչս, որ լոկ անուամբ կոչեցաւ Վարդապետ և ոչ գործով. թէպէտ ի մարդկանէ գովիմ, այլ ի տեսողէն ամենայնի՝ պարսաւիմ. և թէ ի մարդկան աչս պարկեշտ երեւիմ, այլ յորդւոցն լուսոյ աւաղիմ. վասն այսորիկ արտասուագին պաղատանաք խնդրեմ պատահողացդ այս սուրբ գրոցս, ասէք բոլորով սրտիւ Հայր մեր կամ Քրիստոս որդի Աստուծոյ, կամ Աստուած ողորմի, ասելով ինձ եղկելւոյս և իմ ծնողացս, հօրս՝ Նիկողայոսին և մօրս Շնոֆորին, և եղբարցս՝ Մարտիրոսին և Սարգսին, և քրւերս իմ Ղուդրատին.. Արդ գրեցաւ ի վանքս Ս. Օգսէնտի, ի քաղաքս Սեչով, ի հայրապետութեան Տեառն Տէր Մովսէս կաթողիկոսին, ի թագաւորութեան Ուլախաց երկրիս՝ Աղե-